ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

14 Մայիս 2020, № 17. 1

ՀՀ-ՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ (COVID-19) ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄԵԿԱՄՍՅԱ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ «ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ «ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ» ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ (ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ 26.11.2019Թ.-ԻՆ) ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՇՊՀ գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

Հաստատել ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված արտակարգ դրության պայմաններում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2019-2020 ուստարվա ավարտական քննությունների կազմակերպման հետ կապված «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» ընթացակարգում (հաստատված՝ 26.11.2019թ.-ին) ներառված լրացուցիչ դրույթները.

1. Արտակարգ դրության իրավիճակում 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացները (ռազմական ամբիոնի պետական քննությունների, ԱԱ-ի և ՄԹ-ի նախապաշտպանություններ, հրապարակային պաշտպանություններ) իրականացվում են առցանց եղանակով: ԱԱ-ի և ՄԹ-ի հրապարակային պաշտպանություններն և բողոքարկումները կատարվելու են Zoom տեսակոնֆերանսի հարթակում, իսկ անհրաժեշտ ամբողջ փաստաթղթաշրջանառությունը իրականացվելու է համապատասխան էլեկտրոնային եղանակով:
2. 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ

ատեստավորման գործընթացներով պայմանավորված ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ժամանակ գործընթացի շահառուի պաշտոնական (և/կամ անձնական) էլեկտրոնային փոստից ստացված ցանկացած գրություն կամ փաստաթուղթ համարվում է պաշտոնական, վավեր և համարժեք ստորագրությամբ (և/կամ կնիքով) վավերացված գրությանը և փաստաթղթին:

3. 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացները կազմակերպելու նպատակով մասնագիտական ամբիոնների և ֆակուլտետների համար գործածվելու են ՇՊՀ-ի կողմից հատկացված հատուկ էլեկտրոնային հասցեներ/պաշտոնական էլ.փոստեր, որոնցով պետք է իրականացվի ամփոփիչ ատեստավորման գործընթացում տվյալ ստորաբաժանմանը վերաբերող ողջ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը:

4. Ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ ՇՊՀ ռեկտորը նշանակում է.

ա/ 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացում ֆակուլտետի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ապահովման պատասխանատու(ներ)ին, ով իր գործառույթն իրականացնում է դեկանի անմիջական ենթակայության և վերահսկողության ներքո,

բ/ 2019-2020 ուստարվա ԱԱ-ի և ՄԹ-ի պաշտպանությունների ժամանակ Zoom հարթակում տեսակոնֆերանսների հրավիրման, անցկացման, տեսաձայնագրման և մասնակիցների ներգրավման գործընթացների իրականացման պատասխանատու(ներ)ին, ով իր գործառույթն իրականացնում է դեկանի անմիջական ենթակայության և վերահսկողության ներքո (այսուհետ՝ Zoom-օպերատոր): Ֆակուլտետների Zoom-օպերատորները յուրաքանչյուր Zoom տեսակոնֆերանսից առնվազն մեկ օր առաջ տեսակոնֆերանսի բոլոր մասնակիցներին ուղարկում են Zoom տեսակոնֆերանս մուտք գործելու ID ծածկագիրը:

5. 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ԱԱ-ի և ՄԹ-ի հրապարակային պաշտպանության օրը՝ համապատասխան ժամին, տվյալ կուրսի ուսանողները միանում են Zoom տեսակոնֆերանսին և ըստ մատյանի հերթական համարի ներկայացնում են իրենց աշխատանքը:

6. 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գնահատականները հայտարարվում են Zoom հարթակում:
7. 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գնահատականի բողոքարկման դիմումները ընդունվում են համալսարանի կողմից հատկացված հատուկ էլ.փոստին:
8. 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գնահատականները ամրագրվում եմ համապատասխան ամփոփաթերթում (Հավելված 1), որը ուղարկվում է համապատասխան քննական հանձնաժողովի նախագահի էլ.փոստից ֆակուլտետի պաշտոնական էլ.փոստին:
9. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» ընթացակարգի (հաստատված՝ 26.11.2019թ.-ին) և սույն լրացուցիչ դրույթների առանձին կետերի միջև հակասությունների դեպքում գործելու է Լրացուցիչ դրույթներով նախատեսված կետը:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԵՐ. ՍԵՐՈԲՅԱՆ